01/10.1/9966-10
2010-08-25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Արևիկ Պետրոսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Քաղաքացիական ծառայության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, սկզբունքորեն ընդունելով քաղաքացիական ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերում ընդգրկվող համապատասխան մարմնի ներկայացուցիչների շրջանակի հստակեցման անհրաժեշտությունը, գտնում է, որ օրենքի նախագծի 1-ին հոդվածում համապատասխան մարմնի ղեկավարի մասով պետք է բացառություն սահմանվի Հայաստանի Հանրապետության Նախագահի և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմերի համար։

Հաշվի առնելով օրենսդրական տեխնիկայի պահանջները՝ օրենքի նախագծի 1-ին հոդվածում «առաջինե բառն անհրաժեշտ է փոխարինել «երկրորդե բառով։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր ներկայացրած առաջարկությունների ընդունման դեպքում։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը։

Հարգանքով՝

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

AJV-30-14 2010-08-19

Նախագիծ
Պ-951-21.07.2010-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Քաղաքացիական ծառայության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Քաղաքացիական ծառայության մասինե Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-272 օրենքի 40-րդ հոդվածի 4-րդ կետի առաջին պարբերության «համապատասխան մարմնի ներկայացուցիչներե բառերից հետո լրացնել «(համապասխան մարմնի ղեկավարը եւ նրա տեղակալները, աշխատակազմի ղեկավարը եւ նրա տեղակալները, համապատասխան մարմնի կադրային ստորաբաժանման ղեկավարը, համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը, նրա տեղակալը, ներքին ստորաբաժանման ղեկավարը)ե բառերը։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Քաղաքացիական ծառայության մասինե ՀՀ օրենքում լրացում կատարելու մասինե ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է օրենքով կոնկրետ սահմանել քաղաքացիական ծառայության մրցութային եւ ատեստավորման հանձնաժողովների կազմերում ընդգրկվող համապատասխան մարմնի ներկայացուցիչների շրջանակը՝ նպատակ ունենալով ապահովել մրցութային եւ ատեստավորման գործընթացներում գիտելիքների, հմտությունների, գործնական կարողությունների ստուգման պրոֆեսիոնալ, իրավասու, պատասխանատու մասնակցությունը։